

Ամերիկյան գրականություն, Պատմվածք, Արձակ

16+

Թարգմանիչ՝ Վահան Վարդանյան

«Յիպերբորյան ըմպելիքը» առաջին անգամ տպագրվել է «Մետրոպոլիտեն մեգեզին» հանդեսում, 1901 թվականի հուլիսին:

Ջեյ Լոնդոն

Յիպերբորյան ըմպելիք

Պատմությունը այն սպիտակ մարդու, որը ճարպկորեն իրեն ենթարկեց Սառուցյալ օվկիանոսի ափին մոռացված մի փոքրիկ ժողովրդի

Թոմաս Սթիվենսի ճշմարտացիությունը կարելի է նշանակել որպես ինչ-որ անհայտ x, իսկ երևակայությունը՝ որպես սովորական մարդու երևակայություն՝ բարձրացրած ու աստիճան: Բայց և այնպես պետք է խոստովանել՝ նա երբեք իրեն չի արատավորել այնպիսի արարքով կամ խոսքով, որը կարելի լիներ բացահայտ սուտ անվանել: Նա մի փոքր ազատորեն էր գործում հնարավորի հետ և տատանվում էր հավանականի եզրին, բայց թե նրա պատմությունների մեքենան երբեք չէր ճռնչում: Ոչ մի կենդանի մարդ չէր կարող ժխտել, որ նա բաց գրքի պես գիտեր Յոլուսիսը: Շատ ապացույցներ կան, որ նա եղել է անխոնջ ճանապարհորդ և չտրորված անհամար ճամփաներ է անցել: Ես ինքս էլ այդ գիտեմ, լսել եմ նաև այն մարդկանցից, որոնք նրա հետ հանդիպել են զանազան տեղերում, գլխավորապես Անհայտի սահմանագծին: Այդ ինձ ասել է Յոլուսիսի ծոցի Ընկերության նախկին ներկայացուցիչ Ջոնսոնը, որը Սթիվենսին Լաբրադորի ֆակտորիայում ապաստան է տվել այնքան ժամանակ, մինչև որ նրա շները մի լավ հանգստացել են և հնարավոր է եղել նորից ճանապարհ ընկնել: Այդ ասել է նաև Մաք-Մահոնը՝ Այասկայի Առևտրական ընկերության գործակալը, որը նրա հետ Յանդիպել է Դատչ-Յարբորում, իսկ ավելի ուշ՝ Ալեույան խմբի հեռավոր կղզիներում ինչ-որ տեղ: Միանգամայն անվիճելի է, որ հենց Սթիվենսն է եղել Միացյալ Նահանգների կողմից ուղարկված առաջին հետախուզական խմբերից մեկի ուղեկցորդը, և պատմությունը դրականապես հաստատում է, որ Վեսթերն-Յունիոն Ընկերությունը նույնպես նրա ծառայություններից օգտվել է, երբ նա որոշել է Այասկայի ու Սիբիրի վրայով հեռագրական գիծ անցկացնել Եվրոպա: Վերջապես Ջոն Լամոնը՝ Մաքենզիի գետաբերանի մոտերքում սառույցների մեջ խրված կետորսական նավի նավապետը, շատ անգամ է իր նավի վրա տեսել Սթիվենսին, որը նրա մոտ է եկել ծխախոտի համար:

Այս վերջին հանգամանքը բոլոր կասկածները ցրում է: Այո, դա եղել է հենց ինքը՝ Թոմաս Սթիվենսը. չէ որ նա միշտ և ամենուրեք անդադար ծխախոտ է որոնել: Նախքան նրա հետ ընկերանալը, ես արդեն սովորել էի մի ձեռքով բարևել նրան, իսկ մյուսով դուրս քաշել իմ քիսան: Բայց այն երեկոյան, երբ նրան հանդիպեցի Դոուսոնում, Ջոն Օ'Բրայենի սրահում, նրա գլխավերևում լուսապսակի պես կանգնած էր հիսուն սենթանոց սիգարի ծուխը: Բայց այս անգամ նա ինձնից պահանջեց ոչ թե իմ քիսան, այլ ոսկու տոպրակը: Մենք կանգնած էինք այն սեղանի մոտ, որի վրա փարավոն էին խաղում, և Թոմասը անմիջապես իմ տոպրակը գցեց սեղանին, մեծ խաղազուժար դնելով: «Յիսուն» — ասաց նա, և բանկ բռնողը ի պատասխան միայն գլխով արեց: Շահելով՝ Թոմասը ինձ վերադարձրեց տոպրակը, շահելու «խաղանիշ» պահանջեց և ինձ քարշ տվեց կշեռքի մոտ, որտեղ զանձապահը անփութորեն հիսուն դոլարի ոսկեավազ կշեռք նրա համար:

— Իսկ հիմա իմենք,— առաջարկեց նա: Այնուհետև վաճառասեղանի մոտ բաժակը դատարկելով, ավելացրեց.— Սա ինչ որ չափով հիշեցնում է այն օդին, որ ես քաշել եմ Թատտարատում: Ոչ, դուք այդտեղի մասին գաղափար չունեք, դե՛, այդ տեղը քարտեզի վրա նշանակված էլ չէ: Դա Սառուցյալ օվկիանոսի ափին է, այնտեղից մինչև ամերիկյան սահմանը մի քանի հարյուր մղոն է, և աստծուց մոռացված մի հինգ հարյուր մարդ է ապրում այնտեղ. նրանք ծնվում են, ամուսնանում, երբեմն

սոված մտում և, վերջապես, մեռնում: Հետազոտողները այքաթող են արել նրանց, և հազար ութ հարյուր իննսուն թվականի մարդահամարի մեջ նրանց չէք գտնի: Ժամանակին այնտեղ կետորսական մի նավ է ճգնվել սառույցների մեջ, բայց մարդիկ գնացել են հարավ և այլևս ոչ ոք ոչինչ չի լսել նրանց մասին:

— Հա՛, ես ու Մուռլուուն մի հոյակապ խաղ խաղացինք այնտեղ,— մի բոպե անց ավելացրեց նա, թեթև հոգոց քաշելով:

Չգայով, որ մեծ գործեր և անհավատալի իրադարձություններ են թաքնված այդ հոգոցի տակ, ես Թոմասին քշեցի պտուտախաղի ու փոքրիկ սեղանի միջև ընկած անկյունը և սպասեցի մինչև որ նրա լեզուն կբացվի:

— Միայն մի բանում կարող եմ կշտամբել Մուռլուունին,— ասաց նա, մտախոհ կերպով հայացքը բարձրացնելով:— Միայն մի կշտամբանք: Մուռլուուն հնդկացի է, հեռավոր տեղերից, որտեղ չիպեա ցեղն է ապրում, բայց դժբախտաբար, նա ամեն տեսակ տեքստեր էր քաղել սուրբ գրքերից: Նա դրանք քաղել էր մի ամբողջ սեզոն Նույն ճամբարում ապրելով կանադական մի ֆրանսիացու հետ, որը պատրաստվում էր քահանա դառնալ: Մուռլուուն քրիստոնեական ուսմունքը գործողության մեջ չէր տեսել երբեք, և նրա գլուխը լիքն էր հրաշքների, սիրագործությունների, երկնքից ուղարկված փորձանքների և շատ ուրիշ բաների վերաբերյալ հեքիաթներով, որոնք նա չէր էլ հասկանում: Իսկ մնացած բոլոր բաներում նա հիանալի տղա էր, հմուտ օգնական՝ թե՛ ճանապարհին, թե՛ դադարքի ժամանակ:

Մենք բավականաչափ ծանր օրեր էինք ապրել միասին և բոլորովին հալից ընկել էինք, երբ Թատտարատ մտանք: Լեռնանցքում աշնանային բորանի մեջ ընկնելով, կորցրեցինք մեր հանդերձանքն ու շներին և, երբ գրեթե չորեքթաթ սողալով ավան հասանք, փորներս, ինչպես ասում են, մեջքներիս էին կպել, իսկ մեր հագուստները պատառուտվել էին: Թատտարատի բնակիչները այնքան էլ չզարմացան մեզ տեսնելով. չէ որ արդեն կետորսներ էին եղել նրանց մոտ: Ավանում մեզ հատկացրին ամենամաքեղ խրճիթը և որպես ուտելիք տվեցին ամենազգվելի թերմացքները: Այն ժամանակ ինձ տարօրինակ թվաց, որ բոլորովին մենակ թողեցին մեզ: Բայց Մուռլուուն այսպես բացատրեց.

— Շամանը «սիկտումտում» է,— ասաց նա:

Այդ նշանակում էր, որ շամանը, այսինքն՝ հեքիմը, երկյուղ է կրում իր իշխանության համար, և ահա նա բնակիչներին խորհուրդ է տվել հեռու մնալ մեզանից:

Կետորսների հետ իր կարճատև ծանոթությունից անգամ շամանը, թերևս, եզրակացրել էր, որ իմ ցեղը իր ցեղից ավելի ուժեղ է և ավելի իմաստուն: Եվ նա վարվեց այնպես, ինչպես վարվում են ու միշտ վարվել են աշխարհի բոլոր շամանները: Իսկ հետագա պատմությունից դուք կտեսնեք, որ նա բոլորովին էլ հիմար չէ:

— Այս ժողովրդի օրենքն այսպիսին է,— ասաց ինձ Մուռլուուն,— ով միս ուտել է ուզում՝ պետք է որս անի: Իսկ ես ու դու, պարոնս, այս մարդկանց գենքի հետ վարվել չգիտենք՝ ոչ կարող ենք ճարակորեն աղեղը քաշել, ոչ էլ ինչպես հարկն է նիզակ նետել: Այնպես որ շամանը և առաջնորդ Տումմասուկը խորհրդակցել են ու որոշել, որ մենք կանանց ու երեխաների հետ միասին գյուղ ենք տանելու որսորդների ավարը և ծառայելու ենք իրենց:

— Բայց դա անարդարացի է,— առարկեցի ես:— Չէ որ ես ու դու, Մուռլուուն, ավելին արժենք, քան խավարի մեջ խարխափող այս ժողովուրդը: Ընդ որում մենք պետք է մի լավ հանգստանանք և ուժ հավաքենք, որովհետև դեպի հարավ տանող ճանապարհը երկար է և թույլը չի կարող այն հաղթահարել:

— Բայց մենք ոչինչ չուենք,— ասաց նա՝ այք ածելով պատերի փտած գերաններին ու զգվանքով ներս քաշելով մեր ընթրիքի համար նախատեսված ծովացուլի երկար ժամանակ մնացած մսի զգվելի հոտը:— Այսպիսի ուտելիքով չես կազդուրվի: Մեզ մոտ ոչինչ չի մնացել այն ըմպելիքի շշից բացի, որը սպանում է ցավը, իսկ դրանով էլ փոր չես կշտացնի: Այնպես որ մենք ակամայից պետք է այս հեթանոսների ստրուկը դառնանք, փայտ կոտորենք ու ջուր բերենք նրանց համար: Իսկ այստեղ, այս Թատտարատում լավ բաներ կան, որը ես ու դու չենք տեսնի: Ախ, պարոնս, երբեք հոտառությունս ինձ չի դավաճանել: Նա ինձ տարավ դեպի նրանց գաղտնարանները. այնտեղ,

ինչպես նաև տներում գտնվող մորթիների կույտերի մեջ թաքցված են նրանց պաշարները: Այստեղի մարդիկ համեղ ուտելիքը խլել են դժբախտ կետորսներից, բայց այն քչերին է բաժին ընկել: Իպսուկունկ անունով կինը, որ բնակավայրի ծայրին է ապրում, առաջնորդի տան կողքին, շատ այլուր ու շաքար ունի, և աչքերս ինձ ասում են, որ նրա երեսին անգամ սև մաթ է քսված: Իսկ առաջնորդ Տումմասուկի տնակում թեյ կա. կարծում ես չեմ տեսել, թե այդ պառավ խոզն ինչպես է ազահորեն կուլ տվել թեյը: Շամանը թիթեղյա ամանը լիքը «Սթար» և երկու դուլյ առաջնակարգ ծխելիք ունի: Իսկ մե՞նք ինչ ունենք: Ոչի՛նչ չունենք: Ոչի՛նչ:

Ծխախոտի մասին լսելով, ես այնքան ապշեցի, որ ոչ մի բան չպատասխանեցի:

Բայց Մուուսուն, պատասխանի չսպասելով, ասաց.

— Կա նաև Տուկելիկետան՝ մեծ որսորդի ու հարուստ մարդու դուստրը: Գեղեցիկ աղջիկ է: Շատ լավ աղջիկ է:

Ամբողջ գիշեր, մինչ Մուուսուն խոմփացնում էր, ես շարունակ մտածում էի: Ես չէի կարող հաշտվել այն բանի հետ, որ ինձ այդքան մոտիկ տեղում ծխախոտ կա, իսկ ես չեմ կարող ծխել: Այո, Մուուսուն ճիշտ ասաց. մենք ոչինչ չունեինք: Բայց ինձ համար արդեն պարզ դարձավ, թե ինչ պետք էր անել, և ես առավոտյան Մուուսունին ասացի.

— Շուրջդ մի լավ շոշափիր, քո իմացածի պես, և ծնկանման որևէ սևամեջ ոսկոր գտիր: Ամեն տեղ ման արի և ծածուկ նայիր, թե նրանք որտեղ են պահում կճուճներն ու թավաները և խոհանոցային մյուս ամանները: Հիշիր, ես իմաստուն սպիտակ մարդ եմ: Եվ այն, ինչ ես հրամայեցի, կատարիր արագ և անառարկելիորեն:

Մինչ Մուուսուն բացակայում էր, ես տնակի մեջտեղում դրեցի փոկաճարպով թավան, որի վրա կերակուր էինք պատրաստում մեզ համար և, որպեսզի ավելի ընդարձակ լինի, պատի տակ քաշեցի փտած մորթիները, որոնք մեզ համար որպես անկողին էին ծառայում: Ես քանդեցի Մուուսուկի հրացանը և, փողը անջատելով, այնպես դրեցի, որ այն ձեռքիս տակ լիներ: Հետո բամբակի նման բույսի մանրաթելերից, մի բույս, որ այստեղ կանայք հավաքում են ամռանը, բազմաթիվ պատրույզներ ուղրեցի: Մուուսուն վերադարձավ՝ բերելով իմ ուզած ոսկորը և այն լուրը, թե Տումմասուկի տնակում նավթի հինգ գալոնանոց բիդոն կա և մի մեծ պղնձե կաթսա: Ես գովեցի նրան ու ասացի, որ այժմ պետք է սպասել մութն ընկնելուն: Իսկ կեսգիշերին դիմեցի Մուուսուկին և ասացի հետևյալը:

— Լսիր ինձ, Մուուսու: Առաջնորդը, այդ Տումմասուկը, պղնձե կաթսա և նավթի բիդոն ունի,— ես հնդկացու ձեռքը դրեցի հարթ, ալիքներից ողորկված մի քար:— Ավանում մարդիկ քնել են, և երկինքը աստղերով է պատած: Գնա, կամացուկ սողոսկիր առաջնորդի տնակը և ահա սրանով հարվածիր նրա փորին, միայն թե հնարավորին չափ ամուր: Թող մսի և այն մյուս լավ խորտիկների հոյսը, որ ես ու դու շուտով ուտելու ենք, ուժ տա քո թուլացած ձեռքերին: Իրարանցում կսկսվի, աղմուկ կբարձրանա և ամբողջ գյուղը այստեղ կհավաքվի: Բայց դու մի՛ վախենա, գործիր անաղմուկ և ընդհանուր խառնաշփոթության մեջ անհետացիր գիշերային խավարում: Իսկ երբ Իպսուկունկ կինը՝ Նա, որ մաթ է քսում երեսին, մոտո՞ղ երևա, խփիր և նրան, և ամեն մեկին, ով որ այլուր ունի, ամեն մեկին, ով որ պատահի: Իսկ հետո ինքդ էլ սկսիր բարձրաձայն լաց լինել, իբր ցավից, և՛ կծկվիր, և՛ ձեռքերդ կոտրատիր, ձևացնելով, թե այդ գիշեր քեզ նույնպես աստվածները պատժել են: Եվ այն ժամանակ, Մուուսու մենք կհասնենք այն բանին, որ մեզ կսկսեն մեծարել, և ամեն ինչ մերը կլինի՝ թիթեղյա ամանով թեյախոտը, և՛ առաջնակարգ ծխախոտը, և՛ քո չքնաղ Տուկելիկետան:

Մուուսուն գնաց հանձնարարությունը կատարելու, իսկ ես համբերատարությամբ նրան սպասեցի տնակում: Ես արդեն բերանումս զգում էի ծխախոտի համը: Եվ ահա գիշերային լռության մեջ աղաղակ լսվեց, դրան հաջորդեցին իրարանցումն ու ճչոցները, որոնցից երկինքն անգամ ցնցվեց: Ես վերցրի «ցավափարատիչով» շիշը ու սլացա: Գյուղը բռնված էր աղմուկով, կանայք լայիս էին, բոլորը համակվել էին երկյուղով: Տումմասուկը և Իպսուկունկ կինը, ցավից կծկվելով, թավալվում էին գետնին, իսկ նրանց հետ էլի մի քանի հոգի ու նրանց մեջ՝ Մուուսուն: Ես դետուղեն հրեցի նրանց, ովքեր խանգարում էին իմ անցնելուն, և շիշը մոտեցրի Մուուսուկի շուրթերին: Նա անմիջապես ապաքինվեց ու դադարեց ճչալուց:

Այն ժամանակ մյուս տառապյալներն էլ սկսեցին խնդրել, որ այդ դեղից իրենց էլ տամ: Ես հանդիսավորապես շարադրեցի իմ պայմանները և, նախքան նրանք կընդունեին դեղը ու կապաքինվեին, Տումմասուկից ստացա պղնձե կաթսան ու նավթի բիդոնը, Իպսուկուկ կնոջից՝ շաքար և մաթ, իսկ մյուս տառապյալներից՝ բավականաչափ քանակությամբ այլուր: Շամանը չարությամբ նայում էր ոտքերիս մոտ սողացող մարդկանց, բայց դժվարությամբ թաքցնում էր իր զարմանքը: Վերջապես ես հեռացա՝ գլուխս բարձր պահած, իսկ Մուուսուն կռացած տնքտնքում էր այն ավարի ծանրության տակ, որ իմ հետևից բերում էր դեպի մեր տնակը:

Եվ ահա ես գործի անցա: Տումմասուկի պղնձե կաթսայի մեջ իրար խառնեցի երեք կվարտա ցորենի այլուր ու հինգ կվարտա մաթը և դրանց ավելացրի քսան կվարտա ջուր: Կաթսան դրեցի կրակի մոտ՝ որպեսզի խոլուը տաքության մեջ թթվի ու թնդանա: Մուուսուն, գլխի ընկնելով, թե բանն ինչու՞ն է, հայտարարեց, որ ես անսահման իմաստուն եմ, Սողոմոն թագավորից էլ իմաստուն, որը, ինչպես ինքը լսել է, հին ժամանակներում հայտնի է եղել իր իմաստությամբ: Նավթի բիդոնը հարմարեցրի թավայի վերևում, նրա քթամասի մեջ դրեցի խողովակը, իսկ խողովակի մեջ՝ ծնկանման սնամեջ ոսկորը: Մինչ հրացանափողը ծնկին էի հարմարեցնում, Մուուսուն սառույց կտորեց, և ես մանրացված սառույցով ծածկեցի հրացանափողի միջին մասը: Փողի մյուս ծայրում բացվածքի տակ դրեցի թուջե ամանը: Երբ իմ ապուրն արդեն բավականաչափ թնդացել էր, իսկ դրա համար ամբողջ երկու օր պահանջվեց, ես բիդոնը լցրեցի նրանով և վառեցի նախապես պատրաստված պատրույզները:

Երբ ամեն ինչ պատրաստ էր, ես Մուուսուին ասացի.

— Գնա ավանի ավազների մոտ, իմ անունից ողջունիր նրանց և հրավիրիր իմ տնակը՝ այս գիշեր ինձ հետ և աստվածների հետ անցկացնելու համար:

Ապուրը զվարթաձայն քլթքլթում էր բիդոնի մեջ, երբ հյուրերը մեկը մյուսի հետևից սկսեցին մի կողմ քաշել մուտքը ծածկող մորթին ու կամացուկ մտնել տնակը: Ես մանրացրած սառույցը լցնում էի փողի վրա, և նրա բացվածքից կաթում էր թուջե ամանի մեջ: Դա սովորական օդի էր: Բայց թե նրանք ոչ մի պատկերացում չունեին դրա մասին և, երբ ես այդ խմիչքի որակն էի գովում, նրանք վախվախելով հռհռում էին: Ես չար նախանձի կրակներ նկատեցի շամանի աչքերում և, խոսքս վերջացնելով, նրան նստեցրի Տումմասուկի և Իպսուկուկ կնոջ կողքին: Երբ թույլ տվեցի, որ նրանք խմեն, նրանց աչքերը խոնավացան, իսկ փորները տաքացան, և նրանք ոչ միայն դադարեցին վախենալուց, այլև սկսեցին աղերսել, որ էլի տամ: Ինչպես որ պետքն է՝ խմեցրի նրանց և անցա մյուսներին:

Տումմասուկը սկսեց պարծենալ, թե ինչպես մի անգամ ինքը սպիտակ արջ է սպանել, և այնքան եռանդուն էր ձեռքով ու ոտքով ցույց տալիս, որ քիչ մնաց իր քեռուն վնասեր, բայց թե ոչ ոք ուշադրություն չդարձրեց դրա վրա: Իպսուկուկ կինը սկսեց հեծկլտալ՝ հիշելով շատ տարիներ առաջ սառցակարկառների մեջ զոհված որդուն, իսկ շամանը մարգարեություն էր անում ու կախարդում: Լուսաբացին բոլորն արդեն փռվել էին հատակին և խոր քնել: Այսպես նրանք գիշերն անցկացրին աստվածների հետ:

Մնացածն արդեն պարզ է, այնպես չէ՞: Կախարդական խմիչքի լուրը արագորեն տարածվեց գյուղում: Խմիչքը ամեն գովասանքից վեր էր: Մարդկային լեզուն անգոր է նկարագրելու նրա գործած բոլոր հրաշքների թեկուզ տասներորդ մասը: Այն հանգստացնում էր ցավը, ցրում թախիծը, հիշողության մեջ արթնացնում անցյալը, մեռածների դեմքերն ու մոռացված երազանքները: Այն կրակի պես տարածվում էր երակներում, այրում էր, առանց այրելու: Այն խիզախություն էր ներշնչում, շտկում մեջքները, տղամարդկանց դարձնում ավելի առնական: Այն բարձրացնում էր ապագան թաքցնող վարագույրը, տեսիլքներ ոգեկոչում և մարգարեական շնորհք ծնում: Այն բոլորին դարձնում էր իմաստուն, բացում գաղտնիքները: Նրա հրաշագործ հատկությունները անսահման էին, և շուտով բոլորը ցանկացան գիշերն անցկացնել աստվածների ետ: Մարդիկ ինձ էին տալիս ամենատաք մորթիները, ամենաուժեղ շներին, ամենալավ միսը: Բայց ես օդին մեծ ընտրությամբ էի վաճառում միայն նրանց, ովքեր փոխարենը այլուր, մաթ ու շաքար էին բերում: Այնքան շատ պաշար կուտակվեց մեզ մոտ, որ տնակում այլևս տեղ չկար, և ես Մուուսուին հրամայեցի պահեստարան կառուցել:

Ընդամենը երեք օր հետո Տումմասուկը մնանկացավ: Շամանը, որ առաջին անգամից հետո այլևս այնքան չէր խմում, որ հարբեր, ուշադիր հետևում էր իմ բոլոր գործողություններին ու գրեթե մի

ամբողջ շաբաթ դուրս չեկավ մեր տնակից: Սակայն ընդամենը մի տասը օր հետո նույնիսկ Իպուսկուկը սպառեց իր բոլոր պաշարները և տուն գնաց՝ հագիվ ոտքի վրա կանգնելով:

Բայց Մուուսուն դեռևս դժգոհ էր:

— Ախ, տեր իմ, մենք շատ մաթ ենք կուտակել, և՛ շաքար, և՛ այլուր. դա մի ամբողջ հարստություն է: Բայց թե մեր տնակը վատն է, հագուստներս մաշվել են, ու մենք էլ փտած մորթիների վրա ենք քնում: Իմ ստամոքսն այնպիսի միս է ուզում, որը իր գարշահոտությամբ վիրավորանք չի հասցնում երկնքին, ես այն թեյն եմ ուզում, որ խմում է Տումմասուկը, և հետո ես շատ եմ ուզում շաման Նիվակի ծխախոտը ծխել, այն մարդու, որը մեզ կործանելու մասին է մտածում: Ես սիրտ խառնելու չափ այլուր ու շաքար եմ ուտում, ուզածիդ չափ էլ մաթ ունենք, բայց Մուուսուկի սիրտը տխրում է, իսկ նրա անկողինը դատարկ է. . .

— Լռի՛ր, հիմար,— պատասխանեցի ես,— դու ոչինչ չես հասկանում: Մի՛ շտապիր, կարողացիր սպասել, և մենք կտիրենք ամեն ինչին: Իսկ եթե մենք մտքներովս անցկացնենք ամեն ինչ կողոպտել, ապա քիչ բանի կհասնենք և վերջ ի վերջո ձեռնունայն կմնանք: Դու իսկական երեխա ես, և սպիտակ մարդու իմաստուն մտքերը հասկանալը քո բանը չէ: Լեզուդ քեզ պահիր ու նայիր: Ես քեզ ցույց կտամ, թե ինչպես են գործում ծովից այն կողմ գտնվող իմ եղբայրները և ինչպես են նրանք իրենց ձեռքը հավաքում աշխարհի բոլոր հարստությունները: Դա կոչվում է «բիզնես», իսկ դու ի՞նչ ես հասկանում բիզնեսից:

Հաջորդ օրը Մուուսուն հեալով ներս վազեց:

— Տեր իմ, տարօրինակ բաներ են կատարվում շաման Նիվակի տնակում: Ամեն ինչ կորած է, այլևս տաք մորթիներ ու լավ ծխախոտ չենք ունենա: Իսկ այդ բոլորը այն պատճառով, որ դու միայն մաթի և այլուրի հետևից ես ընկել: Ինքդ գնա ու համոզվիր, իսկ ես այս ապուրին կհետևեմ:

Ես գնացի Նիվակի տնակը և տեսա, որ նա սեփական օղեթորման գլան է պատրաստել, հմտորեն ընթորինակելով իմը: Շամանը ինձ դիմավորեց իր ցնծությունը հագիվ քողարկելով: Այո, այո՛ Նիվակը հնարամիտ մարդ էր և, ըստ երևույթին, շատ խոր չէր քնել իմ տնակում:

Այնուամենայնիվ ես բոլորովին էլ չանհանգստացա, որովհետև գիտեի այն, ինչ որ պետք էր ինձ գիտենալ: Իմ տնակը վերադառնալով, սկսեցի Մուուսուկին հորդորել.

— Բարեբախտաբար սեփականության իրավունքը ճանաչվում է այդ ժողովրդի կողմից, որին վիճակված չէ իմանալ մարդկային հասարակության մեջ ընդունված մյուս օրենքները: Եվ քանի որ սեփականության իրավունքն այստեղ հարգում են, ես ու դու շուտով կհարստանանք: Բացի դրանից, մենք կսահմանենք նոր կարգեր, որպիսիք ուրիշ ժողովուրդներ մեծ դժվարությունների ու տառապանքների գնով են ձեռք բերել:

Մուուսուն շատ աղոտ էր հասկանում իմ ասածը, մինչև որ մեզ մոտ եկավ շամանը և, աչքերը փայլեցնելով, սպառնալից ձայնով սկսեց պահանջել, որ իմ պաշարների մի մասը իրեն վաճառեմ:

— Ամբողջ գյուղում այլևս այլուր ու մաթ չկա,— գոռում էր նա:— Դու խորամանկությամբ իմ ժողովրդից ամեն ինչ կորզել ես այն բանի դիմաց, որ նրանք քնել են քո աստվածների հետ: Այժմ նրանք ոչինչ չունեն, բացի ծնկների թուլությունից, գլխի դատարկությունից և այն ծարավից, որը սառը ջրով հագեցնել հնարավոր չէ: Այդ արել ես դու: Բայց իմ ձայնը իշխում է նրանց վրա, և քեզ համար լավ կլինի ինձ հետ առևտուր անել այնպես, ինչպես դու առևտուր ես արել նրանց հետ, երբ մաթ ու այլուր ես ստացել նրանցից:

Եվ ես պատասխանեցի.

— Գործարար խոսքեր են: Իմաստությունն ինքն է քո բերանով խոսում: Արի առևտուր անենք: Ահա այսքան այլուրի ու մաթի դիմաց դու ինձ մի թաս թեյախոտ և երկու դույլ ծխախոտ կտաս:

Մուուսուն այս լսելիս նույնիսկ հառաչեց, և երբ գործարքը կատարվեց, ու շամանը հեռացավ, սկսեց ինձ կշտամբել:

— Չլինի՞ խելքդ թոցրել ես, տեր իմ: Սրանից հետո մենք կորած ենք: Նիվակն ինքն է օղի քաշելու, և կգա ժամանակ, երբ նա ժողովրդին կիրամայի իր օղուց բացի ոչ մի ուրիշ խմիչք չիսմել: Մենք

կորած ենք, մեր ապրանքը իր գինը կկորցնի, իսկ մեր տունը բանի պետք չէ, և Մուռուտի անկողինն էլ սառն է ու դատարկ:

Իսկ ես պատասխանեցի.

— Երդվում եմ գայլի մորթով, դու հիմար ես, քո հայրերն էլ են հիմար եղել, և քո սերունդներն էլ մինչև վերջին ժառանգը հիմար կլինեն: Ավելի լավ է մարդ բոլորովին ուղեղ չունենա, քան ունենա այնպիսին, ինչպիսին քոնն է: Քո աչքերը կույր են ու չեն տեսնում այն օգուտը, որի մասին այնքան ասել եմ քեզ, և դու գործից ոչինչ չես հասկանում: Գնա, հիմար, հիմարի որդի, Նիվակի տնակում փորձիր նրա քաշած օղին և շնորհակալ եղիր քո աստվածներից այն բանի համար, որ գոյություն ունի իմաստուն սպիտակ մարդը, որի շնորհիվ դու լողում ես, ինչպես պանիրը, յուղի մեջ: Գնա խմիր: Իսկ երբ մի կուշտ կխմես, վերադարձիր, քանի դեռ քո շուրթերը կպահպանեն այդ խմիչքի համը, և ինձ ասա, թե ինչպիսին է այն...

Երկու օր անց Նիվակը խոնարհ ողջույն և իր տնակը շնորհ բերելու հրավեր ուղարկեց ինձ: Մուռուտն գնաց, իսկ ես մենակ նստել էի տանը, ականջ էի դնում օդի քաշող սարքի աղմուկին ու ծխում էի շամանի ծխախոտով լցված ծխամորձա: Այդ երեկո լավ առևտուր չկար, ոչ ոք չէկավ խմելու, բացի երիտասարդ որսորդ Անգեյթից, որը հավատարիմ էր ինձ: Որոշ ժամանակ անց Մուռուտն վերադարձավ. նա ծիծաղից շնչահեղձ էր լինում, և աչքերը երկու փոքրիկ անցք էին դարձել:

— Դու մեծ մարդ ես,— ասաց նա:— Դու մեծ մարդ ես և խեղճ Մուռուտին՝ քո ծառային չես դատապարտի այն բանի համար, որ նա երբեմն կասկածում է քո իմաստության վրա:

— Դե, ինչո՞ւմն է բանը,— հարցրեցի ես:— Չլինի՞ թե չափից դուրս շատ ես խմել: Իսկ մնացածներն ինչպե՞ս են, Նիվակի օդուց հետո շա՞տ խորն են քնել:

— Ոչ, նրանք բոլորն էլ չարացել են, նրանց մարմինները այնպես էլ չիմացան, թե ինչ է ուրախությունը: Եվ առաջնորդ Տումմասուկը բռնեց շամանի կոկորդից ու իր նախնիների ոսկորներով երդվեց, որ այլևս երբեք նրան թույլ չի տա իր աչքին երևալու: Լսիր, ամեն ինչ պատմեմ մանրամասնորեն: Երբ ներս մտա՝ ապուրը քլթթթում էր ու եփվում, գոլորշին անցնում էր ծնկի միջով, այնպես, ինչպես քեզ մոտ է, և նույնպես սառցի միջով անցնելով, հոսում էր կաթիլ առ կաթիլ: Նիվակը տվեց, որ խմենք, բայց նրա օղին բոլորովին նման չէ քոնին. մարդու լեզու չի այրում և չի լացացնում: Ճիշտն ասած՝ դա սովորական ջուր էր: Մենք խմում էինք, հա խմում, բայց թե մնում էինք հանգիստ նստած և մեր ներսը չէր տաքանում: Նիվակը շփոթվեց, և ասես թե ամպ իջավ նրա դեմքին: Նա առանձին-առանձին նստեցրեց Տումմասուկին ու Իպսուկուկին և խնդրեց խմել, խմել ու խմել: Եվ նրանք խմեցին, խմեցին, խմեցին, բայց թե մնացին հանգիստ նստած, իսկ հետո Տումմասուկը գայրացած վեր թռավ տեղից և ետ պահանջեց իր մորթիներն ու թեյը: Իպսուկուկը նույնպես ձայնը բարձրացրեց ու բարկացած խոսեց: Դրանից հետո բոլորը ետ պահանջեցին այն, ինչ տվել էին օդու դիմաց, և մեծ իրարանցում սկսվեց:

Այդ պահին մեր տնակի մուտքը ծածկող մորթու հետևում լսվեց Տումմասուկի ձայնը.

— Գուցե այդ շան որդին կարծում է, թե ես կետ ձո՞ւկ եմ:

Մեր առջև կանգնեց բարկացած առաջնորդը: Նրա դեմքը մռայլ էր, հոնքերը կիտած:

— Ձկան փուչիկի պես ուռել եմ և կարող եմ տրաքվել: Փորիս ծանրությունից հագիվ եմ քայլում: Կյանքումս երբեք այսքան չեմ խմել, մինչդեռ հայացքս պարզ է, ծնկներս չեն ծալվում ու ձեռքերս էլ չեն դողում:

— Աստվածները շամանին չեն լսում և չեն ուզում մեզ մոտ գալ,— գանգատվում էին մեկը մյուսի հետևից մեր խրճիթը մտնող մարդիկ:— Միայն քո տնակում են հրաշքներ կատարվում:

Ես հագիվ էի հասցնում խմիչք մատուցել հյուրերին: Բոլորը միանգամից աշխուժացան, իսկ ես քթիս տակ ծիծաղում էի: Բանն այն է, որ շամանին վաճառածս այլուրի մեջ բավականաչափ քանակությամբ սողա էի խառնել, որը Իպսուկուկից էի ստացել: Ինչպե՞ս կարող էր շամանի ապուրը թթվել, եթե սողան քաղցրահամ էր դարձնում այն: Իսկ ինչպե՞ս կարող էր շամանի ապուրը թունդ լինել, եթե այն չէր խմորվել:

Այդ օրվանից սկսած հարստությունը նորից առանց որևէ արգելքի հոսեց մեր տունը: Մենք անհամար քանակությամբ մորթիներ ու կանացի ձեռագործներ կուտակեցինք, մեզ բաժին ընկավ առաջնորդի մոտ եղած թեյախոտը, իսկ միս՝ բերում էին ու բերում անվերջ:

Մի անգամ Մուռուսուն, խիստ աղավաղելով, ինձ պատմեց եգիպտացի Յովսեփի պատմությունը, և ես մի փայլուն գաղափար հղացա դրանից: Շուտով ցեղի կեսը ինձ համար էր աշխատում՝ մսի պահեստարաններ էր կառուցում: Ես ստանում էի որսի ժամանակ ձեռք բերվածի առյուծի բաժինը և ամբարում էի: Մուռուսուն նույնպես անտեղի ժամանակ չէր վատնում: Նա կեչու կեղևից մի ձեռք խաղաթուղթ պատրաստեց և Նիվակին սովորեցրեց «յոթնոց» խաղալ: Նա Տուկեյիկետայի հորը նույնպես խաղի մեջ քաշեց և շուտով կնության առավ այդ աղջկան, իսկ հաջորդ օրը տեղափոխվեց շամանի տնակը, որը լավագույնն էր գյուղում: Նիվակի անկումը լիակատար էր, նա գրկվեց իր գույքից, ծովացուկի մորթուց պատրաստված թմբուկներից և այն մյուս առարկաներից, որոնք ծառայում էին նրան կախարդանքների ժամանակ. մի խոսքով՝ ամեն ինչից: Եվ վերջ ի վերջո նա ստիպված եղավ փայտ կոտորել, ջուր կրել և Մուռուսուի լիակատար ենթակայության ներքո լինել: Իսկ Մուռուսուն իրեն հայտարարեց շաման, կամ գերագույն քուրմ, և սուրբ գրքի վերաբերյալ իր ունեցած աղոտ պատկերացումների հիման վրա ստեղծեց նոր աստվածներ ու սկսեց կախարդանքներ անել նոր զոհասեղանների առջև:

Ես շատ գոհ էի, գտնելով, որ ամենից լավն այն է, երբ եկեղեցին ու պետությունը միատեղ են գործում, առավել ևս, որ պետության վերաբերյալ ես իմ պլաններն ունեի: Ամեն ինչ ընթանում էր այնպես, ինչպես կանխատեսել էի: Գյուղում այլևս չկային ժպտացող դեմքեր, երգ ու ծիծաղ չէր լսվում: Մարդիկ մնայլ էին ու նոթերը կիտած. անընդհատ գժտություններ էին ծագում, կռիվներ էին լինում, օր ու գիշեր չէր դադարում աղմուկ-աղաղակը: Որսորդները Մուռուսուի օրինակով խաղաթուղթեր պատրաստեցին իրենց համար և տարվեցին խաղով: Տումմասուկը գաղտնաբար ծեծում էր կնոջը. դա դուր չէր գալիս նրա քեռուն, և սա մի անգամ ծովացուկի ժանիքով այնպես հարվածեց նրան, որ առաջնորդը իր աղաղակներով իրար խառնեց ամբողջ ավանը և իրեն խայտառակեց ժողովրդի առջև: Նոր զվարճությունները մարդկանց կտրեցին որսից, և գյուղում սով սկսվեց: Գիշերները երկար էին ու մութ, իսկ առանց մսի օղի ձեռք բերել հնարավոր չէր, և ահա բոլորը սկսեցին տրտնջալ առաջնորդի վրա: Ես հենց դրան էլ ձգտում էի: Երբ մարդիկ բավականաչափ սովի մատնվեցին, ես հավաքեցի ամբողջ գյուղը, ինձ տոհմապետ ձևացնելով՝ մի երկար ճառ ասացի ու կերակրեցի սովյալներին: Մուռուսուն նույնպես հանդես եկավ ճառով, և այդ ճառերի ու այն բանի շնորհիվ, ինչ ես արեցի ժողովրդի համար, ինձ առաջնորդ ընտրեցին: Մուռուսուն, որը աստծու հրամաններն էր հաղորդում ժողովրդին, ինձ օժեց փոկի ճարպով, թեև դա շատ անշնորհք ձևով արեց, որովհետև այնքան էլ պարզ չէր պատկերացնում օժան արարողությունը: Այսպես մենք երկուսով թագավորական իշխանության աստվածային ծագման գաղափարը ներշնչեցինք այդ ժողովրդին: Եվ քանի որ կազմակերպված տոնախմբության ժամանակ օղին ու միսը առատ էին, նոր վարչակարգը դուր եկավ նրանց:

Ինչպես տեսնում եք, բարեկամս, ես բարձր պաշտոն եմ գրավել, և՛ ծիրանի եմ հագել, և՛ ժողովուրդներ եմ կառավարել: Ես մինչև հիմա էլ թագավոր կլինեի, եթե ծխախոտի պաշարը չվերջանար, և եթե Մուռուսուն սպասածից ավելի խելոք ու ստոր չլիներ: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ նրան դուր եկավ Իսանխուուկը՝ Տումմասուկի մեծ աղջիկը, իսկ ես դեմ էի նրա մտադրությանը:

— Օ՛, եղբայր իմ,— ասում էր նա ինձ,— դու հարկ համարեցիր նոր օրենքներ մտցնել այս ժողովրդի համար, իսկ ես լսել եմ քո խոսքերը և խելք հավաքել: Աստվածները քեզ թագավորելու իրավունք են տվել, իսկ ինձ՝ ամուսնանալու:

Ինձ վիրավորեց այն սանձարձակությունը, որով նա ինձ «եղբայր» էր անվանում, ես բարկացա և որոշեցի ստիպել նրան, որ ենթարկվի: Բայց նա դիմեց ժողովրդին և երեք օր շարունակ կախարդանքներ արեց, մինչև որ շատերին իր կողմը գրավեց: Յետո նա, վկայակոչելով աստծու կամքը, օրինականացրեց բազմակնությունը: Իսկ քանի որ Մուռուսուն շատ խորամանկ էր, նա կանանց թիվը սահմանեց գույքային ցենզին համապատասխան, և իր հարստության շնորհիվ ավելի լավ վիճակում էր, քան մնացած տղամարդիկ: Ես չէի կարող չհիանալ նրա ճարպկությամբ, թեև ակնհայտ էր, որ հաջողությունը նրա գլուխը պտտեցրել է, և նա չի հանգստանա, մինչև ամբողջ իշխանությունն ու ամբողջ հարստությունը իր ձեռքը չվերցնի: Նա ուղղակի փքվում էր հպարտությունից, նա մոռացել էր, որ ամեն ինչով ինձ էր պարտական, և որոշեց ինձ ջախջախել:

Սակայն հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես էր այդ ստահակը իր ձևով նպաստում նախնադարյան հասարակության աստիճանական զարգացմանը: Օղու նկատմամբ մոնոպոլիա ունենալով, ես այլևս իմ եկամուտը նրա հետ չէի կիսում: Այն ժամանակ Մուռուսուն, երկեղեցական հարկեր սահմանեց: Նա բնակչության վրա եկեղեցական տասանորդ դրեց, շաղակրատելով «առաջնածին գեր գառներին զոհաբերելու» ու նման ուրիշ բաների մասին և վկայակոչելով մի ժամանակ լսած բիրիական առակները ու դրանք խեղաթյուրելով հոգուտ իրեն: Նույնիսկ այդ բանը լռությամբ տարա: Բայց երբ նա պրոգրեսիվ եկամտահարկի նման ինչ-որ բան սահմանեց, ես վրդովվեցի և իզուր, որովհետև նրան հենց այդ էլ հարկավոր էր: Նա անմիջապես դիմեց ժողովրդին, և իմ հարստությանը նախանձող ու հարկերի բեռնան տակ կքած մարդիկ պաշտպանեցին նոր շամանին: «Ինչո՞ւ մենք պետք է վճարենք, իսկ դու՝ ոչ:— Մի՞թե Մուռուսու շամանի բերանով աստված չի խոսում»: Ես գիջեցի, և անմիջապես օղու գինը բարձրացրի: Մուռուսուն իրեն չկորցրեց և էլ ավելի մեծ հարկեր դրեց ինձ վրա:

Այսպես բացահայտ կռիվ սկսվեց մեր միջև: Ես պայքար ծավալեցի ի պաշտպանություն Նիվակի ու Տումմասուկի ոտնահարված իրավունքների: Բայց ճակատամարտը շահեց Մուռուսուն. նա հոգևոր խավ ստեղծեց և երկուսին էլ բարձր աստիճան տվեց: Նրան հարկավոր էր իր ձեռքում պահել իշխանությունը, և նա այդ խնդիրը վճռեց այնպես, ինչպես հաճախ վճռվել էր նաև դրանից առաջ: Այո, ես սխալ թույլ տվեցի: Ես ինքս պետք է շաման դառնայի, իսկ նրան դարձնեի առաջնորդ: Բայց ես շատ ուշ հասկացա, և հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների կռվի մեջ ես պարտվեցի. թեև շատ տաք վիճաբանություններ էին տեղի ունենում, սակայն շուտով գերակշռությունը շամանի կողմն անցավ: Ժողովուրդը հիշում էր, որ Մուռուսուն էր ինձ թագավոր օծել, և նրանց համար պարզ դարձավ, որ իմ հզորության աղբյուրը հենց նա է: Միայն քչերը հավատարիմ մնացին ինձ, և նրանցից ամենանվիրվածը Անգեյթն էր: Իսկ Մուռուսուն գլխավորում էր ժողովրդական կուսակցությունը և ամենուրեք լուրեր տարածում, թե իբր ես մտադիր եմ տապալել իրեն և ժողովրդին պարտադրել իմ պիղծ աստվածներին: Խելոք սրիկան ինձ կանխեց. չէ՛ որ նույն բանը ես էի ուզում անել՝ հրաժարվել թագավորական աստիճանից և հոգևոր գնեքով կռվել հոգևոր իշխանության դեմ: Բայց նա ժողովրդին ահաբեկել էր իմ աստվածների, առանձնապես մեկի՝ Բիզ-Նես աստծու արատների վերաբերյալ պատմություններով, և խառնել իմ խաղաթղթերը:

Հենց այդ ժամանակ ինձ դուր եկավ Կուլկտուն՝ Տումմասուկի ամենափոքր աղջիկը. ես նույնպես դուր եկա նրան: Բանակցություններ վարեցի, բայց նախկին առաջնորդը, առաջարկված գլխագինն ընդունելով, կտրականապես մերժեց ինձ, հայտարարելով, թե այս աղջիկը ևս նախատեսված է Մուռուսուի համար: Դա արդեն չափից դուրս էր: Քիչ էր մնում, որ ես խուժեի շամանի տունը և սպանեի նրան: Բայց, բարեբախտաբար, ես ժամանակին հիշեցի, որ գյուղում գրեթե ամբողջ ծխախոտը վերջացել է, և ծիծաղելով տուն գնացի: Հաջորդ օրը Մուռուսուն նորից սկսեց կախարդանքներ անել և, խեղաթյուրելով հացի ու ձկան առակը, այն ներկայացրեց որպես իր սեփական ստեղծագործությունը, իսկ ես, տողատակերը կարդալով, հասկացա, որ նա աչքը տնկել է պահեստարաններում գտնվող իմ մսի պաշարներին: Ուրիշները նույնպես շատ լավ հասկացան այդ, և քանի որ շամանը նրանց չէր ստիպում որսի գնալ, նրանք մնում էին տանը նստած ու գրեթե ոչ ոք ոչ արջ, ոչ եղջերու գյուղ չէր բերում:

Ես հույսս դրեցի այն բանի վրա, որ գյուղում ոչ միայն ծխախոտը, այլև այլուրև ու մաթն էլ գրեթե վերջացել էին: Ես իմ պարտքն էի համարում բնիկներին ցույց տալ, թե ինչ է սպիտակ մարդու իմաստությունը, և ուզում էի հիմնավորապես վառել Մուռուսուին, որը գոռոզացել էր և մոռացել, որ իր հզորությամբ ամբողջովին ինձ է պարտական: Հենց նույն գիշեր գնացի մսի իմ պահեստարանները և ինչքան ուժ ունեի աշխատեցի, իսկ հաջորդ օրը մարդիկ նկատեցին, որ գյուղի շները կարծես թե ծանրացել են ու ծուլացել: Ես այդպես աշխատում էի ամեն գիշեր և ոչ ոք ոչինչ չէր կասկածում, իսկ շները ավելի ու ավելի էին գիրանում, այն դեպքում, երբ մարդիկ նիհարում ու նիհարում էին: Նրանք տրտնջում էին և պահանջում, որ մարգարեությունը վերջապես կատարվի, բայց Մուռուսուն աշխատում էր նրանց հանգստացնել. նա սպասում էր, որ սովն ավելի աստկանա: Բայց նրա մտքով էլ չէր անցնում, թե ես այդպիսի բան կանեմ, և իմ պահեստարանները դատարկ կլինեն:

Երբ ինձ մոտ ամեն ինչ արդեն պատրաստ էր, ես Անգեյթին և ինձ նվիրված մյուս մարդկանց, որոնց գաղտնի կերակրում էի, ուղարկեցի գյուղ, որ ժողովրդին հավաքեն: Ամբողջ ցեղը հավաքվեց իմ տնակի առջև, որի հետևում ցցերի վրա կանգնած պահեստարաններն էին:

Մուռուռն նույնպես եկավ ու կանգնեց շրջանի կենտրոնում, իմ դեմ-դիմաց, հավատացած, որ ես ինչ-որ դավ եմ նյութում, և պատրաստ՝ իր դեմ ուղղված իմ առաջին իսկ հարձակման դեպքում հաշիվ մաքրելու ինձ հետ: Բայց ես հարգալից ողջունեցի նրան:

— Օ՛, Մուռուռ, օրհնյալը աստծու,— սկսեցի ես,— իհարկե, քեզ զարմացնում է, որ ես ժողովրդին կանչել եմ: Այն բոլոր հիմարություններից հետո, որ ես արել եմ, դու, իհարկե, թեթևամիտ խոսքեր ու արարքներ ես սպասում ինձանից: Բայց այդ չի լինի: Ասված խոսք է՝ ում որ աստվածներն ուզում են կործանել, առաջ նրա խելքն են առնում: Եվ ես իրոք անխելք եմ եղել: Ես գործել եմ քո ցանկություններին հակառակ, ծաղրել եմ քո իշխանությունը և ամեն տեսակ հիմար ու ինքնակամ արարքներ կատարել: Բայց այս գիշեր ինձ տեսիլք եկավ, ու ես հասկացա, թե որքան մեղսալից եմ եղել իմ ուղիները: Իսկ դու իմ առջև կանգնեցիր պայծառ աստղի պես՝ լուսապսակը ճակատիդ, ու ես հոգով ըմբռնեցի քո մեծությունը: Իմ միտքը լուսավորվեց: Ես հասկացա, որ քեզ շնորհված է գրուցել աստծու հետ, և երբ դու խոսում ես, աստված լսում է: Ու ես հիշեցի, որ բոլոր բարի գործերը կատարել եմ աստծու ողորմածությամբ և Մուռուռի ողորմածությամբ:

— Այո, զավակներ իմ,— բացականչեցի ես, դիմելով ժողովրդին,— այն ամբողջ արդարացին ու լավը, որ ես արել եմ, արվել է Մուռուռի խորհրդով: Երբ ես լսել եմ նրա ասածները, միշտ հաջողություն եմ ունեցել: Բայց երբ ես ականջներս փակել եմ և ինքնակամ գործել, իմ մտքերը խառնաշփոթ են եղել: Նրա խորհրդով ես մտի պաշար եմ տեսել ու սև օրերին կերակրել եմ սովյալներին: Նրա ողորմածությամբ ես առաջնորդ դարձա: Իսկ ինչի՞ համար օգտագործեցի ես իմ իշխանությունը: Ասեմ ազնվաբար՝ ոչ մի բանի: Այդ իշխանությունը պատեցրեց իմ գլուխը, ես ինձ Մուռուռից ավելի ուժեղ կարծեցի և ահա դժբախտության մեջ ընկա: Իմ կառավարումը իմաստուն չէր, և աստվածները բարկացան: Դուք սովի ճիրանների մեջ ընկաք, մայրերի կրծքի կաթը ցամաքեց, և ծծկերները ամբողջ գիշեր լաց են լինում: Եվ ես, որի սիրտը զայրացել է ընդդեմ Մուռուռի, այժմ չգիտեմ, թե ինչ անեմ և որտեղից ուսելիք ճարեմ ձեզ համար...

Այդ ժամանակ մարդիկ սկսեցին գլուխներն օրորել, ժպտալ, իրար ականջի փսփսալ, ու ես հասկացա, որ նրանք հացի ու ձկան առակը չեն մոռացել: Ես շտապ շարունակեցի:

— Հիմա ես համոզվել եմ իմ հիմարության և Մուռուռի իմաստության մեջ: Ես անգոր եմ, իսկ Մուռուռն՝ ուժեղ: Դրա համար էլ, խելահեղությունից ապաքինվելով, մեղա եմ գալիս և շտկում եմ չարիքը: Ես պիղծ աչքերով եմ նայել Կուկտուհին, բայց նա կտրվի Մուռուռին, թեկուզ և օրենքով նա ինձ է պատկանում, մի՞թե ես նրա համար իսկական գին չեմ վճարել Տումմասուկին: Բայց ես արժանի չեմ այդ աղջկան, և նա հոր տնակից կփոխադրվի Մուռուռի տունը: Երբ երկնքում արևն է շողում, լուսնի լույսը չի երևում: Թող Տումմասուկը իրեն պահի այն ապրանքները, որ ես եմ նրան տվել, իսկ Մուռուռն թող կին առնի անվճար, որովհետև աստված կամեցել է նրան այդ աղջկա տերը դարձնել:

Եվ քանի որ ես խելացիորեն չեմ օգտվել իմ հարստությունից ու ճնշել եմ ձեզ, օ՛ իմ զավակներ, ես Մուռուռին եմ նվիրում նավթի բիդոնը, և՛ ծնկածև ոսկորը, և՛ հրացանի փողը, և՛ պղնձե կաթսան: Հիմա ես էլ չեմ կարող պաշար կուտակել. և երբ դուք կամենաք խմել, Մուռուռն ձեր ծարավը կհագեցնի՝ առանց ձեզ կողոպտելու: Որովհետև նա մեծ մարդ է, և աստված է խոսում նրա բերանով:

Իմ սիրտը փափկել է, ու ես զղջացել եմ իմ անմտությունների համար: Ես հիմար եմ և հիմարի որդի: Ես չար աստված Բիզ-Նեսի սպասավորն եմ:

Իմանալով, որ ձեր ստամոքսները դատարկ են, ես դրանք լցնել չեմ կարող: Ես ինչպե՞ս առաջնորդ լինեմ ու ձեզ կառավարեմ, եթե ձեզ դեպի կործանում եմ տանում: Ինչո՞ւ անեմ այն, ինչ որ վատ է: Մուռուռն շաման է, նա խելքով գերազանցում է բոլոր մարդկանց, նա կկարողանա արդարամիտ ու բարի տիրակալ լինել: Եվ այս բոլոր պատճառներով ես որոշեցի հրաժարվել: Թող առաջնորդ լինի Մուռուռն, որը այս օրերին, երբ ամբողջ գյուղում միս չկա, գիտե, թե ինչպես պետք է կերակրել սովյալներին:

Մարդիկ սկսեցին կատաղորեն ծափ տալ, բացականչելով՝ «Կլո՛շ: Կլո՛շ» — որ նշանակում էր՝ «Լավ»:

Ես զարմանք և անհանգստություն տեսա Մուռուռի աչքերում. նա ոչ մի կերպ չէր կարող հասկանալ, թե ինչ է տեղի ունենում, և վախենում էր սպիտակ մարդու նենգությունից, մի մարդ,

որը իրենից ավելի խելոք էր: Չէ որ ես ոչ միայն ընդամենը նրա ցանկություններին, այլև կռահեցի դրանցից մի քանիսը: Իսկ նա ժողովրդին իմ դեմ հանել չէր կարող. ժամանակը հարմար չէր. չէ որ ես հենց նոր կամովին հրաժարվեցի իշխանությունից:

Նախքան բազմությունը կցրվեր, ես հայտարարեցի, որ օղեթորման գլանը այսուհետև Մուռլուսի սեփականությունն է, իսկ մնացած ամբողջ օղին հանձնում եմ ժողովրդին: Մուռլուսն փորձեց բողոքել, որովհետև մինչև հիմա մենք հետևում էինք, որ բոլորը միանգամից չհարբեն: Բայց մարդիկ բղավում էին. «Կլո՛շ: Կլո՛շ» — և պարում էին իմ դռան առջև: Ու մինչ նրանք դրսում ավելի ու ավելի բարձրաձայն էին աղմկում, որովհետև խմիչքը նրանց գլուխն էր խփել, տնակի ներսում ես խորհրդակցում էի Անգեյթի և իմ մյուս կողմակիցների հետ: Ես նրանց ասացի, թե ինչ պետք է անեն և ինչ խոսեն: Յետո ես աննկատելիորեն քաշվեցի անտառը, որտեղ պատրաստ սպասում էին լավ բեռնված երկու սահնակներ և լավ կերակրված երկու շնաթվածքներ: Գարունն արդեն բացվելու վրա էր, և լավ կլիներ հարավ մեկնել հիմա, երբ ձյունը դեռ բավականաչափ ամուր էր նստած: Բացի դրանից, գյուղում այլևս ծխախոտ չէր մնացել: Այստեղ, անտառում ես կարող էի հանգիստ սպասել, վախենալու ոչինչ չուներ: Եթե հանկարծ մտածեին հետապնդել ինձ, ապա նրանք շատ շուտ ետ կմնային, քանի որ նրանց շները չափից դուրս գիրացել էին, իսկ իրենք էլ չափից դուրս թույլ էին: Ըստ որում ես գիտեի, թե ինչպիսի հիասթափություն է նրանց սպասում. չէ որ ինքս էի այդ բանը նախապատրաստել:

Շտապով եկավ իմ կողմակիցներից մեկը, հետո՝ երկրորդը:

— Օ, տե՛ր իմ,— ճչաց առաջինը, հագիվիագ շունչ քաշելով:— Ավանում իրարանցում է, խառնաշփոթություն, ոչ ոք ոչինչ չի հասկանում: Մարդիկ հարբել են, կռվում են իրար հետ, իսկ ոմանք արդեն նետերն են հանել: Այսպիսի դժբախտություն դեռ երբեք չէր եղել...

Իսկ երկրորդն ասաց.

— Տեր իմ, ես արեցի, ինչպես որ դու կարգադրել ես: Նենգ խոսքեր եմ փսփացել հետաքրքրասեր ականջներին և հիշեցրել նախկին ժամանակները: Իպսուկուկ կինն արդեն ողբում է իր երբեմնի հարստությունը... Տումմասուկը երևակայում է, թե ինքը նորից առաջնորդ է: Իսկ մարդիկ սոված են ու դետուդեն են ընկնում կատաղությամբ:

Իսկ երրորդն ասաց.

— Նիվակը կործանեց Մուռլուսի գոհասեղանները և աղոթում է մեր հին աստվածներին, որոնց մենք այնքան տարիներ պաշտել ենք: Եվ բոլոր մարդիկ ողբում են այն հարստությունը, որ խմիչքի են տվել և որը այլևս չուներ: Իսկ Իսանիտուկը խանդից կռվեց Կուկտուկի հետ, և շատ աղմուկ եղավ: Եվ հետո, չէ որ նրանք նույն մոր երեխաներն են, երկուսով հարձակվեցին Տուկելիկետուկի վրա: Եվ, վերջապես, երեքը միասին փոթորկի պես ընկան Մուռլուսի վրա, մինչև որ նա փախավ տնից, ծաղրի առարկա դառնալով ժողովրդի առաջ: Որովհետև տղամարդը, որը չի կարող իր կանանց հախից գալ, նա ծիծաղելի է:

Այնուհետև անտառ եկավ Անգեյթը:

— Տեր իմ, մեծ դժբախտություն է պատահել Մուռլուսի հետ. ես մարդկանց հրահրեցի, և նրանք գնացին նրա մոտ, գոռգոռալով, որ սոված են և որ ժամանակն է, որպեսզի մարգարեությունը կատարվի: Նրանք բարձրաձայն աղաղակում էին՝ «Մի՛ս: Մի՛ս»: Մուռլուսն, զայրույթից և խմած օղուց դեռևս ջղագրգռված, իր կանանց հրամայեց, որ լռեն, և ժողովրդին տարավ դեպի քո պահեստարանները: Նա տղամարդկանց հրամայեց բացել դրանք ու կշտանալ: Բայց պահեստարանները դատարկ էին: Նրանցում միս չկար: Բոլորը վախից քարացան: Եվ լռության մեջ լսվեց իմ ձայնը. «Օ՛ Մուռլուս: Իսկ ո՞րք է միսը: Մենք գիտենք, որ այստեղ միս է եղել: Մի՛թե մենք որսից հենց այստեղ չենք բերել միսը: Եվ եթե դու ասես, թե մի մարդ կարող է այդքանը կերած լինել, ապա դա կեղծիք կլինի: Իսկ չէ որ մեզ նույնիսկ մորթի ու ոսկոր էլ բաժին չի ընկել: Ո՞րք է միսը, Մուռլուս: Դու խոսում ես աստվածների հետ: Որտե՞ղ է միսը, միսը»: Եվ մարդիկ հարցնում էին. «Դու աստվածների հետ ես խոսում: Որտե՞ղ է միսը», և վախվիսելով փսփսում էին իրար հետ:

Ես շրջում էի նրանց մեջ և վախեցնում ամեն տեսակ խորհրդավոր ու անհասկանալի բաների վերաբերյալ պատմություններով, որպիսիք լինում են կյանքում, մեռելների վերաբերյալ

պատմություններով, որ ստվերների պես գալիս են ու գնում և չար գործեր կատարում: Սարսափով համակված՝ բոլորը մթից վախեցող փոքրիկ երեխաների պես իրար գլխի հավաքվեցին: Նիվակն սկսեց խոսել, թե չարիքը Մուռուտի տնակից է եկել մեզ մոտ: Եվ այս խոսքերից մարդիկ միանգամից կատաղեցին, վերցրին նիզակները, ցլաժանիքներն ու գավազանները, սկսեցին քարեր հավաքել ափին: Մուռուտն փախավ գնաց տուն, իսկ քանի որ նա օրի չէր խմում, ապա նրանք էլ չէին կարող նրան բռնել, և դոփոդփում էին միևնույն տեղում ու խանգարում իրար: Ու հիմա էլ դեռ նրա տնակի մոտ աղմկում է ժողովուրդը, իսկ Մուռուտի կանայք ոռնում են ներսում, և աղմուկի պատճառով նրա ձայնը լսել հնարավոր չէ...

— Դե, Անգեյթ, դու շատ լավ ես կատարել ամեն ինչ:— գովեցի ես նրան:— Հիմա վերցրու այս սահնակը ու նիհար շներին և արագ սլացիր Մուռուտի մոտ: Եվ նախքան հարբած ժողովուրդը գլխի կընկնի, թե բանն ինչու՞ն է, բռնիր նրան ու բեր այստեղ...

Մուռուտին սպասելու ընթացքում ես մի քանի բարի խորհուրդներ տվեցի իմ բարեկամներին: Անգեյթը վերադարձավ. սահնակի վրա նստած էր Մուռուտն, և նրա դեմքին եղած ճանկոժվածքներից երևում էր, որ կանայք մի լավ քոթակել էին նրան: Նա ցած թռավ սահնակից և լաց լինելով ոտքերս ընկավ.

— Օ՛ տեր իմ, դու կներես Մուռուտին, քո ծառային, այն բոլոր չարիքները, որ նա գործել է: Դու մեծ մարդ ես, դու կներես...

— Ինձ եղբայր անվանիր, Մուռուտ, ինձ եղբայր անվանիր,— խորհուրդ տվեցի ես ու մոքասիկի ծայրով բոթելով ոտքի կանգնեցրի նրան:— Հիմա ենթարկվելո՞ւ ես ինձ:

— Այո, տեր իմ,— նվկվում էր նա:— Միշտ, միշտ:

— Այդ դեպքում պառկիր սահնակի վրա.— Ես մտրակը վերցրի աջ ձեռքս:— Պառկիր երեսնիվայր: Դե շուտ արա, որովհետև այսօր մենք ճանապարհ ենք ընկնում, գնում ենք դեպի հարավ...

Երբ նա, ինչպես հարկն էր, երկարեց, սկսեցի ձաղկել նրան, ամեն անգամ խփելիս հիշեցնելով այն բոլոր անախորժությունները, որ նա ինձ պատճառել էր:

— Ընդհանրապես չհնազանդվելու համար՝ մեկ: Մասնավորապես չհնազանդվելու համար՝ երկու: Իսանխոռուկի համար՝ երեք: Իսկ սա էլ հոգու փրկության համար: Սա Կյուկտուկի համար: Սա իշխանությունը խլելու համար: Աստծուց քեզ տրված իրավունքների համար: Իսկ սա չաղիկ գառների համար: Իսկ սա ու մեկ էլ սա՝ եկամտահարկի և հացի ու ձկան առակի համար: Իսկ սա էլ քո ամբողջ անհնազանդության համար: Եվ վերջում՝ այս մեկն էլ ստացիր: Սա նրա համար, որ դու այսուհետև ավելի ողջամիտ ու հասկացող լինես: Իսկ հիմա վերջ տուր ոռնալուդ ու վեր կաց: Դահուկներդ կապիր և առաջ գնա. շների համար արահետ կբանաս: Դե, գնացի՛նք: Առա՛ջ:

Թոմաս Սթիվենսը կամացուկ ժպտում էր ինքն իրեն, ծխելով հինգերորդ սիգարը և ծխի օղակներ բաց թողնելով դեպի առաստաղը:

— Լավ, իսկ ի՞նչ եղան Թատտարատի բնակիչները,— հարցրեցի ես,— թերևս ձեր կողմից դաժանություն է եղել նրանց սովամահության մատնելը:

Եվ նա, ծուխը ներս քաշելով, ծիծաղելով պատասխանեց.

— Մի՞թե պարարտ շներ չկային այնտեղ: